



Հայաստանի առողջապահության և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 6

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Քննաթերթ- պատասխաններ

	Թեմա	Միավոր
Հարց 1	Համախմբված ֆինանսական հաշվետվություններ- ՖՀՄՍ 10	20
Հարց 2	Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն և մեկնաբանում	20
Հարց 3	Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում. շահույթ/վնասի և այլ համապարփակ արդյունքի մասին հաշվետվություն և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն - ՀՀՄՍ 1, 1 բաժնետոմսի բաժին ընկնող շահույթ- ՀՀՄՍ 33	20
Հարց 4	Բազմակի ընտրության հարցեր- ՀՀՄՍ 16, ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 10, ՀՀՄՍ 20, ՀՀՄՍ 12	20
Հարց 5	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն - ՀՀՄՍ 7	20
Ընդամենը		100

Հարց 2.

(ա) Ցուցանիշների հաշվարկում

Ցուցանիշ	Ֆեռարի սպորտ	Սպորտաման	
Համախառն շահույթի մարժա	$120,000 / 500,000 \times 100\% = 24\%$	$140,000 / 440,000 \times 100\% = 31.8\%$	1 միավոր
Գործառնական շահույթի մարժա	$50,000 / 500,000 \times 100\% = 10\%$	$64,000 / 440,000 \times 100\% = 14.5\%$	1 միավոր
Կրեդիտորական պարտքի օրեր	$70,000 / 380,000 \times 365 = 67\text{օր}$	$24,000 / 300,000 \times 365 = 29\text{ օր}$	1 միավոր
Գործարկված կապիտալի շահութաբերություն	$50,000 / (180,000 + 90,000) \times 100\% = 18.5\%$	$64,000 / (120,000 + 30,000) \times 100\% = 42.7\%$	1.5 միավոր
Ֆինանսական լծակ	$90,000 / 180,000 \times 100\% = 50\%$	$30,000 / 120,000 \times 100\% = 25\%$	1.5 միավոր

Հաշվարկների բանաձևեր.

- Համախառն շահույթի մարժա = Համախառն շահույթ / Հասույթ x 100%
- Գործառնական շահույթի մարժա = Գործառնական շահույթ / Հասույթ x 100%
- Կրեդիտորական պարտքի օրեր = Առևտրային կրեդիտորական պարտք / Վաճառքի ինքնարժեք x 365 օր
- Գործարկված կապիտալի շահութաբերություն = Գործառնական շահույթ / Գործարկված կապիտալ x 100%
- Ֆինանսական լծակ = Ոչ ընթացիկ պարտավորություններ / Սեփական կապիտալ x 100%

բ) Մեկնաբանություն

Ֆինանսական արդյունքներ

1. Ֆեռարի սպորտի հասույթը (500,000 հազ. դրամ) ավելի բարձր է, քան Սպորտամանի հասույթը (440,000 հազ. դրամ), ինչը սպասելի է, քանի որ Ֆեռարի սպորտը վաճառում է «բարձր դասի բրենդային սպորտային հագուստ» և հավանաբար սահմանում է ավելի բարձր վաճառքի գին, քան Սպորտամանի «միջին դասի» սպորտային հագուստը: - 0.5 միավոր
2. Ֆեռարի սպորտի համախառն շահույթի մարժան (24%) ավելի ցածր է, քան Սպորտամանինը (31.8%): Սա հետաքրքրանշական է, քանի որ սովորաբար բարձր դասի բրենդային ապրանքների վաճառքը ավելի բարձր մարժա է ենթադրում, քան միջին դասի սպորտային հագուստը: Հնարավոր է, որ Ֆեռարի սպորտը զեղչերով է վաճառում ապրանքներ, և հետևաբար մարժանները այդքան բարձր չեն: - 1 միավոր
3. Ավելին, Ֆեռարի սպորտը կրում է արտադրության ծախսեր, քանզի ի տարբերություն Սպորտամանի, արտադրող ընկերություն է: Այս ծախսերը հավանաբար չեն օգնում բարձրացնել Ֆեռարի սպորտի շահույթները: Քննարկելի է, թե արդյոք այս երկու ընկերությունները համեմատելի են՝ որպես համանման ընկերություններ: - 0.5 միավոր
4. Ֆեռարի սպորտի գործառնական շահույթի մարժան նույնպես ցածր է՝ համեմատած Սպորտամանի հետ: Եվ դա պայմանավորված է Ֆեռարի սպորտի ցածր համախառն շահույթի մարժայով, որը անդրադառնում է շահույթի և այլ համապարփակ արդյունքի հաշվետվության վրա: Այնուամենայնիվ, Ֆեռարի սպորտի և Սպորտամանի գործառնական ծախսերի լրացուցիչ ուսումնասիրություն է անհրաժեշտ: - 0.5 միավոր
5. Ֆեռարի սպորտը հավանաբար կրում է ավելի բարձր գործառնական ծախսեր, քան Սպորտամանը, քանի որ այն ունի իր սեփական միջազգային բրենդային խանութների ցանց: Սպորտամանը վաճառում է միայն տեղական վաճառատաներում և հնարավոր է չի կրում նույնքան բարձր վարձակալության/ապասարկման ծախսեր, ինչպիսին Ֆեռարի սպորտն է կրում: - 1 միավոր
6. Ֆեռարի սպորտը հավանաբար կրում է նաև լրացուցիչ ծախսեր, ինչպիսիք են արտահանման/լոգիստիկայի ծախսերը և արտարժույթի տատանումները, որոնք կարող են ազդել գործառնական ծախսերի տատանվողականության վրա: Օգտակար կլիներ ունենալ այդ ծախսերի մանրամասն վերլուծություն: - 0.5 միավոր
7. Աուդի սպորտ ընկերությունը գեներացնում էր 40% համախառն շահույթի մարժա, որը շատ բարձր է Ֆեռարի սպորտի համար: Այնուամենայնիվ, գործառնական շահույթի մարժան շատ ցածր էր Ֆեռարի սպորտի համար՝ չնայած նրան, որ այս ցուցանիշները ներառված են Ֆեռարի սպորտի մարժաններում: Աուդի սպորտ ընկերության վաճառքը հավանաբար արդարացված էր, բայց վերջինիս այլևս գոյություն չունենալու արդյունքում Ֆեռարի սպորտի ապագա շահույթները ավելի ցածր կլինեն: - 1 միավոր
8. Աուդի սպորտ ընկերությունը որոշակի ծառայությունների դիմաց վճար է կատարել Ֆեռարի սպորտին 2025 թվականին 2,400,000 դրամի չափով (ամսական 200,000 դրամ): Սա բարձրացրեց Ֆեռարի սպորտի շահույթները, բայց սա ևս այլևս չի տեղի գեներացվի, քանի որ Աուդի սպորտը օտարվել է: Այս լրացուցիչ եկամտի բացակայությունը կնվազեցնի Ֆեռարի սպորտի ապագա շահույթները: - 1 միավոր
9. Ավելին, Աուդի սպորտի օտարման 10,000,000 դրամ օգուտը ևս ժամանակավորապես բարձրացրել է Ֆեռարի սպորտի շահույթները: Քանի որ սա շահույթի և այլ համապարփակ արդյունքի հաշվետվության մեջ միանգամյա արտասովոր հոդված է, ապագայում շահույթները ավելի ցածր կլինեն: - 1 միավոր
10. Գործարկված կապիտալի շահութաբերությունը նույնպես ցածր է Ֆեռարի սպորտում, և դա պայմանավորված է Ֆեռարի սպորտի ցածր շահույթի մարժաններով: Միաժամանակ, Սպորտամանի բարձր գործարկված կապիտալի շահութաբերության պատճառն այն է, որ գործարկված կապիտալը այդքան բարձր չէ, ինչպիսին Ֆեռարի սպորտինն է: Եթե Սպորտամանը հաջողությամբ ընդլայնվի դեպի միջազգային շուկա, գործարկված կապիտալը հավանաբար կավելանա, և գործարկված կապիտալի շահութաբերությունը կարող է նվազել Սպորտամանի համար: - 1 միավոր

Ֆինանսական վիճակ

Ֆեռարի սպորտի կրեդիտորական պարտքի օրերը (67 օր) ավելի երկար են, քան Սպորտամանինը (29 օր), ինչը կարող է վկայել իրացվելիության խնդիրների մասին: Այնուամենայնիվ, Ֆեռարի սպորտն ավելի մեծ ընկերություն է, և ավելի բարձր առևտրային կրեդիտորական պարտքեր ունենալը արտասովոր չէ: Հնարավոր է, որ արտադրության բարձր ծախսերը ևս հանգեցրել են բարձր կրեդիտորական պարտքերի: - 1 միավոր

12. Ֆեռարի սպորտի ֆինանսական լծակը (50%) կրկնակի ավելի բարձր է, քան Սպորտամանինը (25%), և դա պայմանավորված է Ֆեռարի սպորտի ավելի բարձր պարտքի մակարդակով, որը իր հերթին հանգեցրել է բարձր ֆինանսական ծախսերի: Ֆեռարի սպորտի դրամական միջոցների մնացորդը կբարելավվի, երբ նրանք ստանան Աուդիտ սպորտի վաճառքի գծով 20,000,000 դրամ դրամական միջոցները: Հնարավոր է, որ այս լրացուցիչ դրամական միջոցները օգտագործվեն Ֆեռարի սպորտի որոշ պարտքեր մարելու համար: - 1.5 միավոր

13. Սպորտամանի ցածր ֆինանսական լծակը ցույց է տալիս, որ նրանք պարտք ներգրավելու պոտենցիալ ունեն՝ նախատեսված միջազգային ընդլայնումը ֆինանսավորելու նպատակով: Այնուամենայնիվ, նրանք պետք է հաշվի առնեն , որ սկզբնական շրջանում ռազմավարության իրագործումը առաջացնի լրացուցիչ ծախսեր և շահույթը կարող է իջնել: - 1.5 միավոր

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, երկու ընկերություններն էլ շահութաբեր են, բայց Սպորտամանը, կարծես, ավելի լավ կատարողական ունի, քան Ֆեռարի սպորտը: Այնուամենայնիվ, Սպորտամանը նախատեսում է որդեգրել Ֆեռարի սպորտի ռազմավարությունը, ուստի դա կհանգեցնի լրացուցիչ ծախսերի, ցածր շահույթների և դրամական միջոցների մնացորդների նվազման: Ավելի խելամիտ կլինի համեմատել Ֆեռարի սպորտին և Սպորտամանին, երբ Սպորտամանի միջազգային ընդլայնումը իրագործված կլինի: - 2 միավոր

Հարց 4

1. Գ

Լուծում:

$$\text{Հողի վերագնահատում} = 1,900,000 - 1,600,000 = 300,000$$

$$\text{ՎՊից մասհանում} = 1,500,000 / 50 = 30,000$$

$$\text{ՎՊ վ/մ} = 1,410,000 - 30,000 + 300,000 = 1,680,000$$

2. Ա

Լուծում:

$$\text{Պարտատոմսի արժեքը սկզբնական ճանաչման պահին} = 1,000,000 - 100,000 - 20,000 = 880,000$$

$$\text{Պարտատոմսի ամորտիզացված արժեք} = 880,000 + 880,000 * 10\% - 1,000,000 * 6\% = 908,000$$

3. բ, գ

4. գ

5. բ

6. բ

7. ա

Լուծում:

$$\text{Բաժնետոմսերի ԻԱ սկզբնական ճանաչման պահին} = 20,000 * 7 + 140,000 * 1\% = 141,400$$

$$\text{Բ/տ վերագնահատում} = 20,000 * 9 - 141,400 = 38,600$$

8. գ

Լուծում:

$$\text{Ընթացիկ հարկի գծով ծախս} = 56,000,000 + 4,800,000 = 60,800,000$$

$$\text{Հետաձգված հարկի գծով ծախս} = 8,800,000 - 5,000,000 = 3,800,000$$

$$\text{Ընդամենը շահութահարկի գծով ծախս} = 64,600,000$$

9. բ

Լուծում:

$$\text{Ինքնարժեք} - 1,200,000 - 75\%$$

$$\text{Վաճառքի գին} - 100\%$$

$$x = 1,200,000 * 100 / 75 = 1,600,000$$

$$\text{2 տարիների հետաձգված եկամուտ} = 1,600,000 * 2 = 3,200,000$$

10. ա

Հարց 5

«Գաստրոնոմ» ՍՊԸ դրամական միջոցների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար դրամ		Միավորներ
Գործառնական գործունեությունից ԴՀ		
Շահույթ մինչև հարկումը	3,158	
<i>Ճշգրտումներ:</i>		
Մաշվածություն (160 + 552) (Ծան. 1)	712	1.0
Հիմնական միջոցների օտարումից օգուտ (Ծան. 2)	172	0.5
Պետական շնորհից եկամուտ	(250)	0.5
Ներդրումային եկամուտ	(240)	0.5
Ֆինանսական ծախսեր	520	0.5
Պաշարների աճ (2,092 – 1,570)	(522)	1.0
Դեբիտորական պարտքերի աճ (1,870 – 1,648)	(222)	1.0
Կրեդիտորական պարտքերի նվազում (1,288 – 1,520)	(232)	1.0
Պահուստների նվազում (0 – 240)	(240)	1.0

Հազար դրամ		Միավորներ
Վճարված տոկոս (50 + 520 – 80) (Ծան. 3)	(490)	1.0
Վճարված շահութահարկ (Ծան. 4)	(736)	2.0
Վճարված շահաբաժիններ	(360)	0.5
Գործառնական գործունեությունից զուտ ԴՀ	1,270	
Ներդրումային գործունեությունից ԴՀ		
ՀՄ ձեռքբերում – Հող և շենք (Ծան. 5)	(100)	1.5
ՀՄ ձեռքբերում – Սարքավորումներ (Ծան. 6)	(1,696)	1.5
ՀՄ օտարումից մուտքեր (512 – 172 * 2) (Ծան. 2)	340	1.0
Պետական շնորհի ստացում (Ծան. 7)	350	1.0
Ներդրումների ձեռքբերում	(1,380)	0.5
Ստացված ներդրումային եկամուտ	240	0.5
Ներդրումային գործունեությունից զուտ ԴՀ	(2,246)	

Հազար դրամ		Միավորներ
Ֆինանսավորման գործունեությունից ԴՀ		
Բաժնետոմսերի թողարկումից մուտքեր (Ծան. 8)	600	1.0
Ֆինանսավորման գործունեությունից զուտ ԴՀ	600	
ԴՀ և դրանց համարժեքների զուտ նվազում	(376)	
ԴՀ սկզբնական մնացորդ (244 + 100)	344	0.5
ԴՀ վերջնական մնացորդ (240 - 272)	(32)	0.5

Համապատասխան ֆորմատի պահպանման համար մինչև 1.5 միավոր

Հաշվարկներ և Ծանոթագրություններ

Ծան. 1: Մաշվածություն

- Շենքի մաշվածություն = $(1,520 - 1,360) = 160$
- Սարքավորումների մաշվածություն = $(928 - 864 + \text{օտարվածի մաշվածություն } 488) = 552$

Ծան. 2: ՀՄ օտարում (Սարքավորում)

- Հաշվեկշռային արժեք = $1,000$ (Սկզբ. արժեք) - 488 (Կուտ. մաշվ.) = 512
- Օտարումից վնաս = 172
- Մուտքեր օտարումից = $512 - 172 = 340$

Ծան. 3: Վճարված տոկոս

- 50 (սկզբ. պարտք) + 520 (ծախս) - 80 (վերջ. պարտք) = 490

Ծան. 4: Վճարված շահութահարկ

- $(734 + 800)$ սկզբ. պարտավորություն + $1,040$ (ծախս) - $(960 + 878)$ վերջ. պարտավորություն = 736

Ծան. 5: Հող և շենքի ձեռքբերում

- $3,600$ (սկզբ) + $300 * 2$ (վերագնահատում) + ձեռքբերում (X) = $4,000$ (վերջ) => X = 100

Ծան. 6: Սարքավորումների ձեռքբերում

○ $2,440 \text{ (սկզբ)} - 1,000 * 2 \text{ (օտարում)} + \text{Ձեռքբերում (X)} = 3,136 \Rightarrow X = 2,696$

Ծան. 7: Պետական շնորհի ստացում

○ $(400 + 250) \text{ սկզբ.} - 250 \text{ (եկամուտ)} + \text{Ստացում (X)} = (550 + 200) \text{ վերջ} \Rightarrow X = 350$

Ծան. 8: Բաժնետոմսերի թողարկում

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերաչափումից պահուստ
ՍՄ	2,000	120	80
վերաչափում			300
Բոնուսային թողարկում	200		(200)
Փոխարկում պարտատոմսերի $800000/100*25$	200	600	
ընդամենը	2400	720	180
ՎՄ	2800	920	
բ/տ թողարկում	400	200	

ԿԿ+ԷԵ սկզբնական մնացորդ՝ 2120

Արտոնյալ թողարկում՝ 200

Փոխարկելի պարտատոմսի փոխարկում՝ 800

Բտ թողարկում՝ X

ԿԿ+ԷԵ վերջնական մնացորդ՝ 3720

$X = 3720 - (2120 + 800 + 200) = 600$